ԵԼՔ ՄՄ պետական 2075
25 11 25.
2
(6)

«Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 02294699
ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 70/22
էլ. փոստի հասցե՝ sag@krafthem.am
Հեռ.՝ 094 098 838

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 18.03.2024թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-25-7/6-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 13.05.2025թ/ Ընկերությունը պետք է մատակարարեր յուղեր և քսուքներ, որից 100կգ. քսուքներ /Քսուք N9/ Համաձայնագրի կնքումից հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում: Ընկերությունը սահմանված ժամկետում չի մատակարարել 100կգ «Քսուք N 9» ապրանքատեսակը, սակայն վերսնշյալ քսուքը ընկերության կողմից մատակարարվել է ս.թ. օգոստոսի 5-ին, որը տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով չի ընդունվել: Ս.թ.հոկտեմբերի 17-ին առբերվել է նոր խմբաքանակ՝ 96կգ, սակայն այն ևս պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով չի ընդունվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7,1 կետի «ա և բ » ենթակետերը («Քսուք N 9»ի մասով մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և խախտվել է ապրանքնի մատակարարման ժամկետը): ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. նոյեմբերի 26-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը «Քսուք N 9»ի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14 483 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 1 745 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև

05.11.2025թ. ներառյալ, ինչպես նաև Պայմանագրի հավելված 1 7-րդ կետի համաձայն ենթակա է գանձման 16 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 43 536 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 65 304 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2025թ. դեկտեմբերի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 43 536 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 65 304 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, և ապա «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. դեկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ